## 10. ԱՂԱՎՆԱՁՈՐ (ԱՑՆԱՁՈՒՐ)

Այս երկու հարևան գյուղերում արձանագրություններ ունեցող հին հուշարձաններ չկան։ Սակայն երկու գյուղերի սահմանները հատող հեղեղատի վերին հոսանքի ափերին գտնվում են երկու գյուղատեղեր, գրեթե հավասար հեռավորությամբ Աղավնաձորից և Ռինդից, ուր կան եկեղեցիների ավերակներ, խաչքարեր և գերեզմանաքարեր։

Աղավնաձորի սահմանի մեջ մնացող ավերակները գյուղից հեռու են մոտ չորս կիլոմետրի չափ, դեպի հյուսիս-արևմուտք. գտնվում են հեղեղատի ձախ ափին և կոչվում են Ներքին Ուլգյուր կամ Վանքի Դուզ։

Ներքին Ուլգյուրում կանգուն են թաղածածկ փոքրիկ եկեղեցու չորս պատերը միայն, սրբատաշ քարերով շինված։ Եկեղեցու շուրջ կան խաչքարեր և տապանաքարեր։ Իրենց հնամենի ոճով առանձնապես հետաքրքիր են եկեղեցու հարավ-արևմուտքում կանգնած շատ մեծ և կոթողանման խաչքարերը, որոնք կանգնեցված են 1009 և 1199 թվականներին։

Եկեղեցու պատերին պահպանված արձանագրությունները նվիրատվական են, ամենահինը 1281 թվականից։ Արձանագրությունների մեջ եկեղեցին կոչվում է ս. Աստվածածին։

Վերին Ուլգյուրը գտնվում է Նախորդից արևմուտք, մեկ կիլոմետր հեռու, գետակի աջ ափին և մնում է այժմ Ռինդ գյուղի սահմանների մեջ։

Վերին Ուլգյուրում պահպանվել են ս. Ստեփանոս կոչված եկեղեցու հիմնապատերը միայն։ Շուրջը խաչքարեր են, իսկ 100 մետր հեռու, դեպի հարավ՝ փոքր բարձրության վրա՝ գերեզմանատունն է։

Ս. Ստեփանոսում պահպանված արձանագրությունը նույնպես նվիրատվական է, 1292 թվականից. շուրջը գտնվող խաչքարերն ավելի հին են, մեկը՝ 1283 թվականից։

Առանձնապես հետաքրքիր է գերեզմանատան մեջ, պատվանդանի հետ միասին շուռ եկած խաչքարի արձանագրությունը (№ 97)՝ Մոմիկ անվան հիշատակումով։ Մեր գրականության մեջ միայն մեկ Մոմիկ է հայտնի և դա հայտնի գրիչ, մանրանկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Մոմիկն է, Գլաձորի սանը, որն ստեղծագործել է XIII դարի վերջում և XIV-ի առաջին կեսում, Վայոց ձորի մշակույթի կենտրոններում։ Այս պատճառով էլ մեր Նորահայտ արձանագրության մեջ հիշատակված Մոմիկին նույնացնում ենք այդ նշանավոր արվեստագետի հետ։ Նորահայտ այս արձանագրությունը պարզաբանում է Մոմիկի կենսագրության հետ կապված երկու կարևոր և մինչ այժմ մութ մնացած հարցերը. Ա. Մոմիկը մինչ այժմ համարվել է հոգևորական վարդապետ. այս արձանագրության մեջ երևան է գալիս նրա որդին՝ Ասկանդարը, հետևաբար Մոմիկն աշխարհական է եղել[1]։ Բ. մինչ այժմ նրա ծննդավայրն անհայտ է եղել, կարծիք է հայտնվել, որ նա կիլիկեցի է. Նորահայտ արձանագրության ծավալված բովանդակությունից պարզվում է, որ նրա որդին այժմյան ավերակ Վերին Ուլգյուր գյուղի բնակիչ է եղել, որտեղ ունեցել է «հայրենիք»—հողային սեփականություն։ Նշանակում է Մոմիկը ևս Վերին Ուլգյուրի գյուղացի է եղել։




ՆԵՐՔԻՆ ՈՒԼԳՅՈՒՐ-ՎԱՆՔԻ ԴՈՒԶ (ԳՅՈՒՂԱՏԵՂ)

**81. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է ս. Աստվածածնի մոտ, հարավ-արևմուտքից. խաչի թևերի տակ և հարավային ու հյուսիսային կողերին, 3 տող.

ՀԱ[ՅՈ]Ց [ԹՈՒԱԿԱՆՍ :ՆԾԸ: (1009) ՍԱՐԳԻՍ ԵՐԵՑ ԿԱՆԳՆԵՑԻ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ.] ՍՈՒՐԲ ԱՇԱԾԻՆ։

Ծանոթ. Խաչքարը հին կոթողի տեսք ունի, լուրահատուկ է առանձնապես ճակատին շինված գնդաձև մասը, որի վրա խաչ է քանդակված։

Լուսանկ. 21

[1] Մոմիկին վարդապետ չի համարում նաև պրոֆ. Կ. Ղաֆադարյանը՝ «Ավանի երկլեզվյան՝ ծածկագիր արձանագրությունը», էջ 12։ Տե՛ս նաև Հ. Աճառյան, Անձն. բառ., Գ, էջ 418, № 4։

82. ԽԱՉՔԱՐ, կանգնած է նախորդի մոտ, հարավից, հարավային կողին և Թիկունքին. 14 տող.



ԹՎ. ։ՈԽԸ։ (1199) ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍՈՒՐԲ ՆՇԱՆՍ ՁԵՌԱՄԲ ՍԱՐԳՍԻ . . . .

Մանոթ. *Թիկունքին եղած 12 տող արձանագրությունը գրվել է մակերեսորեն, այդ պատճառով էլ տառերը խիստ մաշվել են և լուսանկարի վրա չեն ստացվել: Վերծանել չենք վստահում. այդ մասում պարզ են միայն ՍՄՊԱՏ անունը և վերջում ԱԾ ՈՂՈՐՄԵՑԷ բառերը:*

Լուսանկ. *(միայն երեսի մասը և կողի արձանագրության հետքերը):*

83. Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին, ներքուստ 6 տող.



ԵՍ ՍԱՆՃԱՐՍ ԵՒ ԴԱՐԱՆՍ . . . . |
-- ԱԿ . . . Ա-ՈՆՍ-ՀՈՂՆ Ի| ՄԲ...
ԱԾԱԾԻՆՍ ԵՒ ՍՈՒՐԲ ԵՏՈՒՆ ՄԵԶ
ՊԱՏԱՐԱԳ ԶՂԱԶԱՐՈՒ ՏԱՒՆ.Ն, ԵՒ
ԶԾԱ|ՌԶԱՐԴԱՐՆ, ՈՎ ԽԱՓԱՆԷ ՄԵՐ
ՄԵՂԱՑ|Ն ՊԱՐՏԱԿԱՆ Է. ԹՎ. ։ՉԼ։ (1281)

Մանոթ. *Առաջին տողի վերջը և երկրորդ տողը մեծ մասամբ ջարդոտված են:*

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 101: Ալիշան, 167:*

84. Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին, ներքուստ, նախորդից ներքև, 4 տող.



ԵՍ ՆԱՆԷՍ ՏՎԻ ԱԾԱԾՆԻՍ----ԻՆ|
----ՆԵ ՏԱՓՈՒ ՑԵՏ ԵՒ ԻՄ ՈՐԴՒՔՆ
Տ|ԱՆ ԱՆԽԱՓԱՆ. ՈՎ ԶՏԱ ՄԵՐ
ՄԵՂԱՑՆ| ՏԷՐ Է. Ի ԹՎ. ։ՉԽԶ։ (1297):

Լուսանկ. 22

85. Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատին, նախորդներից արևելք, ներքուստ, 3 տող.



ԵՍ ԹԱՄԹԱ ԽԱԹՈՒՆՍ ՏՎԻ
ԱԾԱԾՆԻՍ ։Լ։(30) . . . .
ԲԱԺԱԿ Ի ՄՃՌԱԿԱԾՈՐՈ, ԻՄ ՑԵՏ ԵՒ ԻՄ ՈՐԴԻՔՆ ՏԱՆ ԱՆԽԱՓԱՆ. ՈՎ ԶՏԱ
ԻՄ ՄԵՂԱՑՆ ՏԷՐ Է. ։ՉԾԷ։ (1308):

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 101: Ալիշան.*

Լուսանկ. 23

***86. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** եկեղեցու հարավային պատին, նախորդի անմիջական տակը, ներքուստ, ӧ տող։*



ԵՍ ՏԱԻՐՍ, ՍԱՐԳՍԻ ՈՐԴ'Ս,
ՁԿՏԷՓՈՍՈՑ ՀՈՂ.Ն ՈՒ Զ|ՏԱՆԾԻՆ
ՍԵՌՆ, ՄԻՆ ԿՈՎ. ՏՎ.Ի Ի ՍԲ.
ԱԾԱԾՆԻՍ ԵՒ| ՄԻԱԲԱՆՔ ՏՎ.ԻՆ
:Բ: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ ՀՈՒ|.ԻԿԻՆ՝
ԱՒԱԳ :Ե: ՇԱԲԱԹ ԱՒՐՆ. ՈՎ.
ԽԱՓԱՆԷ՝ ՄԵՐ ՄԵՂ.ԱՑՆ ՊԱՐՏԱ-
ԿԱՆ Է. ԹՎ.. :ՉՀ'Ա': (1322)։

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 102։ Ալիշան, 167։*
Լուսանկ. 24

***87. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ** եկեղեցու հյուսիսային պատին, ներքուստ, 6 տող.*



'ԿԱՄԱՒՆ ԱՑ ԵՍ Գ'ԱՒԻԹ ՄԻԱԲԱՆԵՑԱ| 'ՍԲ. ԱԾ'ԱԾՆԻՆ. ՍՊԱՍԱՒՈՐՔ ՍԲ.
ՈՒ.ԽՏ'ԻՍ ԵՏՈՒՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊԱՒՂՈՍԻ| ՏԱՒՆԻՆ :Ա: ՊԱՏԱՐԱԳ ԱՆԽԱՓԱ|Ն.
ԿԱՏԱՐԻՉՆ ԱՒՐՀՆԻՆ ԱՑ ԵՒ ԽԱՓ|ԱՆՈՂ.Ն ԴԱՏԻՆ. Ի ԹՎ.ԻՍ :ՉՂ.Զ: (1347)։

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 102։ Ալիշան, 167։*

***88. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, երեսը բաժանված է 6 հարթություններին. գրանըվում է ս. Աստվածածնի արևելքում, 1 տող.*

Գրիգոր քահանայ յիշեցէք.

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 102։ Ալիշան, 167։*

***89. ԽԱՉՔԱՐ**, ընկած է ս. Աստվածածնի արևելքում։*

Ես Յովհաննէս կանգնեցի խաչս ի բարեխաւսութիւն . . . . . .

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 102։ Ալիշան, 167։*

***90. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, ս. Աստվածածնի արևելքում։*

Տղա տիաւք կատարեալ Դանիէլ քահանայ.

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 102։ Ալիշան, 167։*

## ՎԵՐԻՆ ՈՒՂՏՅՈՒՐ (ԴՅՈՒՂԱՏԵՂ)

***91. ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** բեմի պատվանդանին ագուցված երեսպատման մեծ քար, 8 տող.*



[Կ]ԱՄԱՒ ՈՂՈՐՄԱԾԻՆ ԱՅ. ՄԵՔ ԱՒՏԱՐԿԱ. ՈՐԴԻՒՔՍ ՀԱՍԱ[Ն]Ի ՈՒԽՈՑԱԴԵՂ. ՍԵՐ ԱԽԲԱՒՐ ՈՐԴԱՒՔՍ ՄԵՐ ՍՐՏԻ ՅԱՒԺԱՐՈՒ[Թ]Ե[Ա]Բ ԶՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ[Ս] ՀՈՂՆ Ի ԽՈՒ[Ղ]Ա[Ւ]ՔԱՐԻՆ ՏՎԱՔ Ի ՍԲ ՍՏԵՓԱՆՈՍ[Ս] [Վ]ԱՄՆ[Ն] ՀՈԳՒՈ ԵՂԲԱՒՐ [Մ]ԵՐ[ՈՅ] ՄԽԻԹԱՐԱ ՓՈԽԵՑԵԼՈ ԱՌ ՔՍ. ՍԽԻԹԱՐ ԿՐ[Ե]Ց, ԺԱՌԱՆԳ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՀԱՍՏԱՏԵՑ :Ա: ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ Ա[Մ]ԷՆ ՅԱՅՏՆՈՒԹԵ. ԱՐԴ ԹԷ ՄԵՔ, ԿԱՄ ՈՔ Ի ՄԵՐՈՑ, ԿԱՄ ԱՒՏԱՐ[Ա]Ց ՀԱՆԷ[Լ], ՋԱՆԱ ԶՀՈՂՆ :ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՑ[Ն] ՆԶՈՎԱԾ ԵՂԻՑԻ. Ի ԹՎԻՍ :ՉԽԱ: (1292)

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 101, Ալիշան, 182,*
Լուսանկ. 25

***92. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է ս. Ստեփանոսի արևմուտքում, տակին 7 տող.*



ԹՎԻՍ[Ն] :ՉԼԲ: (1283) ԱՅՍ Է ԵՍ ԿՈՒԿՍ ԿԱՆԳՆ[ԵՑԻ] ԶԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ Հ[Ո]ԳՒՈՑ ՄԱՒՐ ԻՄՈՅ, ԵՂԲԱՒՐ ԵՒ ՈՐԴՒՈ[Յ] ԻՄՈՅ, ԻՆՁ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՅ ԻՄՈՅ. ՈՎ ԿԱՐԴԷ[Ք] ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

**Ծանոթ.** *Երրորդ տողի սկզբից չորս ավելորդ տառերին, ըստ երևույթին պետք է գրվեր ԿԱՄԱՒՆ ԱՅ, գրիչը տառերը սխալ տեղադրելով՝ թողել է անավարտ։*

Լուսանկ. 26

***93. ԽԱՉՔԱՐ, կանգնած է ս. Ստեփանոսի արևմուտքում. տակին 8 տող.***



ԹՎ.ԻՍ :ՉԼ.Թ:|. ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ Ա|ՆՏՐԷԱՍ

ԿԱՆԿՆ|ԵՑԻ ԶՍԲ ՆՇԱՆՍ |Ի ԲԱՐ[Ե]ԽԱՒՍՈՒԹՆ.

ՈՐԴՈՅ ԻՍ|ՈՅ ՇԱՏ . . . ԵՒ| ԱՄՈՒՍՆՈՅ . . .

Յ|ԻՇ|ԵՑԷՔ|



***94. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, կանգնած է ս. Ստեփանոսի արևմուտքում, տակին և շրջանակներին, 5 տող.***

ԵՍ ՊԵՏՐՈՍ ԿԱՆԿ[Ն]ԵՑԻ| ԶԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ|

ԵՂ.ԲԱՒՐ ԻՄՈՅ ԾԱՐ|ԱՒԿԱՑ ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՒՐՈՅ

ՈՎ. ԵՐԿՐՊԱԳ|ԷՔ ՅԻՇԵՑԷՔ. Ի ԹՎ. :ՉՀ: (1321)

***95. ԽԱՉՔԱՐ, կանգնած է ս. Ստեփանոսի արևմուտքում. տակին և շըրջանակներին, 9 տող.***



ԵՍ ՔՈՅՐԻԿՍ Կ|ԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԻՆ|Ջ ԵՒ|ԽՈՍ|ՏՐՈՎ|ԿԱՑ. Ո|Վ. ԿԱ|ՐԴԷՔ ՅԻՇԵՑ|ԷՔ|:

Լուսանկ. 27

96. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, գտնվում է ս. Ստեփանոսից հարավ, գերեզմանատան մեջ. տափակ, երեսին 4 տող.*

ԱՅՍ ԷՀԱՆԳԻՍ
ՓԱԼԻԿԻՆԱՂԱ
ԻԹՍՅԻՇԵՑԷՔԹՎԻՍ
ՉԿԲ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ[Տ] ՓԱԼԻԿԻՆ. ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ. ԹՎԻՍ[Ն] ՉԿԲ: (1313):

97. *ԽԱՉՔԱՐ, ընկած է ս. Ստեփանոսից հարավ, գերեզմանատան մեջ, շրջանակներին և ճակատին։*




ԵՍ ԱՍԿԱՆԴԱՐ ՄՈՄԿԱ ՈՐԴԻ ՉԽԱՉՏՈՒՉ ԴԱՐՁՈՒՑԻ. [ՀԱ]ՅՐԵՆԻՔՍ ՁՈՐ ԿՈՐ[ԴՈՒ]Ց ՇԻՆԵՑԻ ԵՏՈՒ . . . ՄԼՔՇԱՅ . . . . . . . ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ ՈՐԴԻՔՆ ՈՒՏԵՆ. ՄԱՍ ՇԱՏՈՆԻԿԱ ՄԱՍՆ ԱՅ. ՅԻՇԵԱ ՔՍ. ԱԾ. ՁԱՍԿԱՆԴԱՐ

Ծանոթ. *Արձանագրությունը գըրված է 3—4 ոճի տառերով և խառն ի խառն՝ զարդերի արանքներում։ Խաչքարը շատ մեծ է, բայց հասարակ մշակումով։ Պատվանդանի հետ միասին շարժէ եկել և լուսանկարել հնարավոր եղավ մի-փոքր մասը։ Կարևոր է Մոմիկ՝ վանական հիշատակությունը, որին հանդիպում ենք նշանավոր գրիչ-մանրանկարիչ և քանդակագործ-ճարտարապետ Մոմիկի հետ. հետևաբար արձանագրության ժամանակն էլ XIV դարի առաջին կեսն է։*

Լուսանկ. 28 *(մի մասը)*

98. *ԽԱՉՔԱՐ, ընկած է ս. Ստեփանոսից հարավ, ջարդոտված. վերծանելի է հետևյալը. 4 տող.*

ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՍՀԱՅՈՑ
··ՆԿԵՑԱՒ··ՉԲԽԱՒՍՈՒԹ··
···ԱՑՈՐԴՈՑՍՈՂՈՄՈՆԻՈՐ
ՅԻՇԷՔԻՏՐ

ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ [ԿԱ]ՆԿ-[Ն]ԵՑԱՒ [ԽԱ]Չ[Ս] ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵ... ...ՈՐԴՈՑ ՍՈՂՈՄՈՆԻ ՈՐ[Ք ԿԱՐԴԱՑՔ] ՅԻՇԷՔ Ի ՏՐ:

Ծանոթ. *Քանդակների ոճը՝ XI—XII դարի*